ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի ԵՎ 6-Ի ՀԵՐԹԱԿԱՆ (ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ) ՆԻՍՏԻ

ք. Երևան **«06» մայիսի 2022թ.**

Հիմք ընդունելով ՀՀ կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կառավարման խորհրդի աշխատակարգի 18-րդ և 19-րդ կետերը և հաշվի առնելով տեսչական մարմնում առկա հրատապ լուծում պահանջող հարցը՝ տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) հերթական նիստը որոշվեց անցկացնել հեռակա քվեարկությամբ:

Խորհրդի հեռակա քվեարկությունը սկսվեց 2022 թվականի մայիսի 5-ին և ավարտվեց 2022 թվականի մայիսի 6-ին՝ ժամը 13^{00}-ին:

Քվեարկությանը մասնակցեցին՝

Խորհրդի նախագահ՝

Վ. Դումանյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

Խորհրդի անդամներ՝

Ա. Ասոյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար

Ռ. Գևորգյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ա. Սարգսյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Ա. Հայրապետյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Ս. Ալոյան - «Դասարան» կրթական ծրագրի հիմնադիր նախագահ

Բ. Փափազյան - «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի խորհրդի անդամ

Քվեարկությանը չեն մասնակցել՝

Ա. Բախշյան - «Հանրային դիվանագիտություն» հասարակական կազմակերպության նախագահի կրթության հարցերով խորհրդական

Ա. Հակոբյան - «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի արտաքին կապերի գծով տնօրեն»

ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՑ

1. ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի՝ զբաղեցրած պաշտոնից ազատման դիմումի քննարկում:

Քննարկման անհրաժեշտ նյութերն ուղարկվեցին խորհրդի անդամների էլեկտրոնային փոստի հասցեներին: Քվեարկությունը կայացավ:

Քվեարկության արդյունքում՝

1. Վ. Դումանյանը 1-ին հարցին քվեարկեց «կողմ»,
2. Ա. Ասոյանը 1-ին հարցին քվեարկեց «կողմ»,
3. Ռ. Գևորգյանը 1-ին հարցին քվեարկեց «կողմ»,
4. Ա. Սարգսյանը 1-ին հարցին քվեարկեց «կողմ»,
5. Ա. Հայրապետյանը 1-ին հարցին քվեարկեց «կողմ»,
6. Ս. Ալոյանը 1-ին հարցին քվեարկեց «կողմ»,
7. Բ. Փափազյանը 1-ին հարցին քվեարկեց «կողմ»:

Քվեարկության արդյունքները՝

Հարց 1-ին՝ 7 «կողմ»:

Այսպիսով, տեսչական մարմնի խորհրդի հեռակա նիստին մասնակցած 7 անդամներից 7-ը օրակարգի հարցին քվեարկեցին «կողմ»:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո խորհուրդը որոշեց.

Հարց 1. Առաջարկել ՀՀ վարչապետին՝ տեսչական մարմնի ղեկավար Ալեքսանդր Շագաֆյանին ազատել զբաղեցրած պաշտոնից՝ համաձայն իր դիմումի:

Խորհրդի նախագահ՝ _____ **Վ. Դումանյան**

ստորագրություն

Խորհրդի քարտուղար՝ _____ **Ա. Գևորգյան**

ստորագրություն